Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Էստոնիայի Հանրապետություն, ք. Տարտու, 7-10 հունիսի, 2022 թվական

4. Հրավիրող կողմը

Էստոնիայի հետազոտությունների խորհուրդը (ԷՀԽ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Հետազոտությունների ոլորտը ֆինանսավորող կազմակերպությունների դերը փոփոխվող աշխարհում» խորագրով միջազգային գիտաժողովին

6. Քննարկված թեմաները

1. գիտության ոլորտը ֆինանսավորող կազմակերպությունների և հասարակության դերը հետազոտությունների աջակցության գործում,

2. միջազգային համագործակցության ընթացքում առաջացած խնդիրները և դրանց հաղթահարման եղանակները, գիտության կայուն զարգացման երաշխիքները,

3. գիտության զարգացման ռազմավարություններ, հետազոտողների և երիտասարդ գիտնականների հետազոտական ծրագրերում ընդգրկման նոր հնարավորություններ,

4. ֆինանսական միջոցների օգտագործման առավել արդյունավետ մեխանիզմներ:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Հունիսի 8-ին ԷՀԽ նախագահ Անու Նորմայի նախագահությամբ կայացել է հանդիպում, որի ընթացքում ԷՀԽ բոլոր ստորաբաժանումների ղեկավարները ներկայացրեցին համապատասխան ոլորտներում իրականացվող աշխատանքները: Ծավալվեց քննարկում մասնակից երկների միջև հետագա համագործակցության

զարգացման վերաբերյալ, մասնավորապես՝ գիտության և հետազոտությունների հանրայնացման Էստոնիայի հաջող փորձը փոխանակելու, ինչպես նաև գիտության ոլորտի միասնական տեղեկատվական շտեմարանի վարման վերաբերյալ: Ս. Հայոցյանը ներկայացրել է ՀՀ գիտության ոլորտում վերջին տարիներին կատարված բարեփոխումները, ՀՀ գիտության կոմիտեի կողմից իրականացվող միջազգային համագործակցության ընդլայնմանն ուղղված միջոցառումները և համագործակցության առաջնային ուղղությունները:

Նույն օրը Ս. Հայոցյանը մասնակցել է Էստոնիայի ազգային թանգարանում կայացած ԷՀԽ տասնամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը:

Հունիսի 9-ն կայացած գիտաժողովի ընթացքում ելույթներով հանդես են եկել Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Լատվիայի, Լեհաստանի գիտական և նորարարական աշխատանքները համակարգող կառույցների ղեկավարները, ինչպես նաև Էստոնիայի Հանրապետության նախկին Նախագահ տիկին Կերստի Կալյուլայդը, «Science Europe» կազմակերպության ղեկավար Մարկ Շիլցը, Եվրոպական գիտության հիմնադրամի (ԵԳՀ) ղեկավար Նիկոլաս Վալտերը, Եվրահանձնաժողովի հետազոտությունների և նորարարության տնօրենության գլխավոր ղեկավարի տեղակալ Սիգնե Ռացոն և մի շարք այլ ներկայացուցիչներ: Գիտաժողովին քննարկվեցին հիմնականում երեք թեմաներ՝ գիտական հետազոտությունները ֆինանսավորող կազմակերպությունների ազդեցությունը գիտության և հանրային գործընթացների վրա, հետազոտությունները ֆինանսավորող կազմակերպությունների դերը միջազգային համագործակցության կայացման հարցում և գիտության համակարգի կայունության ապահովումը՝ ֆնանսավորման ավելացման և գիտության ոլորտում աշխատանքի գրավչության բարձրացման միջոցով: Բոլոր հարցերի շուրջ ծավալվել են անմիջական և ծավալուն քննարկումներ:

Ս. Հայոցյանն այցելել է Էստոնիայի Բիոբանկ և գենետիկայի ինստիտուտ, որտեղ հանդիպել է Բիոբանկի ղեկավարի հետ: Ներկայացվել են կենսաբանական նյութի պահպանման պայմաններն ու ընթացակարգերը: Գենետիկայի ինստիտուտում ծանոթացել է ինստիտուտի կառուցվածքին և իրականացվող աշխատանքներին, պայմանավորվածություն է ձեռք բերվել սկսել քննարկումներ համագործակցության հնարավորություններն ուսումնասիրելու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Մասնակիցները կշարունակեն տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև կակտիվացնեն համագործակցությունը ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ընձեռած գործիքների, այդ թվում՝ TAIEX ծրագրի շրջանակում:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ԷՀԽ նախագահի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն շարունակելու աշխատանքային շփումները հայ-էստոնական համագործակցության զարգացման նպատակով:

ԵԳՀ ղեկավարի հետ Ս. Հայոցյանը պայմանավորվել է տեսակապով հանդիպում անցկացնելու շուրջ՝ գիտական փորձաքննության ոլորտում ԵՄ հետ համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև այլ հնարավորություններ քննարկելու նպատակով:

Լատվիայի գիտական խորհրդի նախագահի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկելու երկկողմ համագործակցության հնարավորությունները: Հանդիպումների անցկացման ժամկետները կորոշվեն աշխատանքային կարգով:

Ս. Հայոցյանը Սթարմուս փառատոնին մասնակցության նպատակով Երևան է հրավիրել Եվրահանձնաժողովի հետազոտությունների և նորարարության տնօրենության գլխավոր ղեկավարի տեղակալ Սիգնե Ռացոյին:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

13.06.2022թ.

Recoverable Signature

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777